

## ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒՄԸ\*

### ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ

Բանալի բառեր՝ դերանուններ, բացատրական բառարան, արևմտահայերենի բառարաններ, բառարանային գլխաբառի ընտրություն, բառային իմաստ, քերականական հատկանիշ, բառարանային բացատրություն:

#### Նախաբան

Դերանունների բառարանային ներկայացումը մեծապես կախված է դերանվան ըմբռնումից: Բառերի այս խմբի խոսքիմասային պատկանելության խնդիրն իր վերջնական լուծումը դեռ չի ստացել քերականագիտության մեջ: Դերանունները չունեն ո՛չ իմաստային և ո՛չ էլ քերականական հատկանիշների ընդհանրություն ու միասնություն: Սա դերանունների բառարանագրման նկատելի հակասականության գլխավոր պատճառներից մեկն է: Այսպես, ասենք, ինչ բառը «Հայոց լեզուի նոր բառարան»-ում ունի վեց նշանակություն, որոնցից երկուսը գոյական են, երկուսը՝ մակբայ, մեկը՝ անձական և մեկը՝ անձական ու ձայնարկություն միաժամանակ, բայց ոչ մեկը՝ դերանուն: Մյուս կարևոր պատճառը դերանունների բառային իմաստի չտարրորոշված, խիստ հարաբերական լինելն է: Դրանց իմաստը իրավիճակային է և որոշվում է համատեքստից ելնելով, քանի որ դերանունների մի շատ կաևոր հատկանիշը փոխարինման հատկանիշն է: Այս ամենն իր հետքն է թողնում դերանունների բառարանային ներկայացման վրա:

Գլխաբառի ընտրության խնդիրը դերանունների բառարանագրման ժամանակ

Դերանունների բառարանագրման անմիջիցսկությունը սկսվում է արդեն բառի ելակետային ձևի՝ գլխաբառի ընտրությունից: Կասկածից վեր է, որ տարարմատ և տարահիմք կազմություններ բառաձևերը պետք է բառարաններում ներկայացվեն իբրև գլխաբառեր, ինքնուրույն բառահոլովածներով, այլապես լեզվին լավ չտիրապետողը կըժվարանա դրանք գտնել բառարանում: Սա առանձնապես կարևոր է մեր լեզվի արևմտյան տարբերակի բառարանների համար, քանի որ դրանք մեծապես ունեն նաև ուսուցողական դեր: Սակայն արևմտահայերենի մեր քննած բառարաններն<sup>1</sup> այդ ձևերը սկզբունքորեն չեն

\* Ներկայացվել է 16. II. 2024 թ., գրախոսվել է 28. II. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:

<sup>1</sup> Հայոց լեզուի նոր բառարան (այսուհետ՝ ՀԼՆԲ). 1992, հ. առաջին, 1992, հ. երկրորդ, Հայոց լեզուի նոր բառարան (այսուհետ՝ ՀԼՆԲ). 1968, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան (այսուհետ՝ ՀԱԼԼԲ). 1954, հ. Ա:

տալիս (բերված են միայն հոգնակի ուղղականները): Ընդ որում, թեք հոլովաձևերը չկան նաև ուղղականաձև գլխաբառի հոլովածում: Արևելահայերենի առաջին ծավալուն բառարանի<sup>2</sup> հեղինակը՝ Ս. Մալխասյանցը, անձնական գոյականների տրական և մյուս թեք հոլովաձևերը չի տվել իբրև գլխաբառ, սակայն դրանք գետեղել է հիմնական ձևի՝ ուղղականի բառահոլովածում: Նույն տեղում նա տվել է նաև այդ դերանունների գրաբարյան բոլոր հոլովաձևերը, ինչն արդեն բառարանի հրատարակութայն ժամանակ ավելորդություն էր և ոչինչ չավելացնելով բառի մեկնությունը՝ միայն ծանրաբեռնում էր բառահոլովածը: Ս. Մալխասյանցը անձնական դերանունների եզակի սեռականի ձևերը համարել է ինքնուրույն ստացական դերանուններ և ներկայացրել է որպես գլխաբառեր, սակայն դրանց հոգնակիների մոտ նշել է միայն սեռականի և Հայցականի հոլովաձև և հղում կատարել ուղիղ ձևին:

Արդի հայերենի վերջին երկու բառարաններում<sup>3</sup> նույնպես չկա միօրինակություն: Եթե էդ. Աղայանը հետևողականորեն տալիս է բոլոր դերանունների սեռականը և տրականը՝ հղելով հիմնաբառին, ապա Ակադեմիական բառարանը դրանք ներկայացնում է ընտրողաբար (ԺՀԼԲԲ, 4, 745), միայն եզակիի ձևերը: Սրանք տրված են հղումով, և միայն քո ձևն է նաև բացատրված իբրև ստացական դերանուն (առանց այդ տերմինը գործածելու): Հոգնակիներից որպես գլխաբառ կա միայն իրենց-ը (ԺՀԼԲԲ, 2, 365), որն ավելի կանոնավոր ձև է, քան մյուսները:

Էլ ավելի տարօրինակ է վիճակն անձնական դերանունների հոգնակի թվերի բառարանագրման խնդրում: Կասկած չի հարուցում այս դերանունների հոգնակիների բառարաններում ինքնուրույն գլխաբառով ներկայացնելը, քանի որ դրանք ունեն տարարմատ կամ տարահիմք կազմություն (բացառությամբ դուք-ի): Սակայն դուք և անոնք դերանունները իսպառ բացակայում են արևմտահայերենի մեր քննարկած բառարաններից. նույնիսկ իբրև բառաձև՝ չկան նաև դրանց եզակի թվերի բառահոլովածներում: Նույն բառարաններում կա մենք գլխաբառը: Արևելահայերենի բառարաններում նրանք ձևը կա միայն էդ. Աղայանի բառարանում (ԱՀԲԲ, 1088): ՀԲԲ-ում այն ընդհանրապես հիշատակված չէ, իսկ Ակադեմիականն այն տալիս է նա-ի բառահոլովածում (ԺՀԼԲԲ, 4, 6) հոլովական ձևերից հետո՝ որպես հոգնակիի բառաձև:

**Անձնական դերանունների քերականական հատկանիշների բառարանագրումը**

Բացատրական բառարաններում չկա որևիցե միանմանություն անձնական դերանունների նաև քերականական ձևերի ներկայացման խնդրում:

Ինչպես նշեցինք, արևմտահայերենի բառարաններն այդ ձևերը ընդհանրապես որևէ կերպով չեն ներկայացնում: Սա բխում է դրանց հեղինակների որդեգրած սկզբունքներից, քանի որ այդ բառարաններում չկան նաև գոյականների հոլովումները և հոգնակիների կազմության օրինաչափություններից չեղումները:

<sup>2</sup> Մ ա լ խ ա ս ե ա ն ց (այսուհետ՝ ՀԲԲ). 1944–1945, հ. 1–4:

<sup>3</sup> Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետ՝ ԺՀԼԲԲ). 1969–1980, հ. 1–4, Աղայան (այսուհետ՝ ԱՀԲԲ). 1976:

Արևելահայ բառարանագիրներից Ս. Մալխասյանցը եզակի ուղղականով գլխաբառից հետո տալիս է դերանվան բոլոր հոլովածները՝ եզակի և հոգնակի, նաև՝ գրաբարյան, երբեմն էլ՝ բարբառային-խոսակցական: Ակադեմիական բառարանի հեղինակներն այս հարցում էլ միաձայն չեն: Առաջին դեմքի համար բերված են բոլոր հոլովածները, երկրորդ և երրորդ դեմքերի համար՝ միայն սեռականը և տրականը, իսկ ինքը դերանվան համար՝ նաև սեռականի հոգնակին (ԺՀԼԲԲ, 2, 318): Հոգնակիներից մենք-ի և իրենք-ի մոտ քերականական որևէ նշում չկա, իսկ դուք-ի համար նշված են սեռականը և տրականը: Նրանք բառահոգված այս բառարանում ընդհանրապես չկա, բայց կա իրենց (ԺՀԼԲԲ, 2, 368) բառածևը իբրև ինքնուրույն գլխաբառ: Մի խոսքով, կատարյալ խառնաշփոթ է, և չկա որևէ օրինակափոխություն:

Առավել նախընտրելի է էջը. Աղայանի մոտեցումը: Նա գլխաբառի մոտ բերում է բոլոր հոլովածները՝ իրենց գուգածներով՝ բացի նա-ից:

### Անձնական դերանունների բացատրությունների եղանակները

ԵՍ: Այս դերանունը բառարաններում հիմնականում ճիշտ է ներկայացված. «Անձն. դեր. Ա դեմքի, այն բառը, որ խօսողը գործ է ածում իւր անուն փոխարէն» (ՀԲԲ, 1, 568): Մյուս բառարանները գրեթե նույնությամբ կրկնում են այս բնորոշումը: Երկրորդ նշանակությամբ այն գոյական է և ունի անվանական և հոլովում: Սակայն ոչ մի բառարանում չի ասվում, որ սա փոխանվանական կիրառություն է, միայն Ակադեմիականն է նշում, որ գոյականաբար միշտ գործածվում է հոգով: Եթե փխնն նշումը չկա, ուրեմն գոյական ես-ը ամենայն հավանականությամբ համանուն է և պետք է ներկայացվեր ինքնուրույն գլխաբառով, ինչը իհարկե սխալ կլիներ:

Ի տարբերություն արևելահայ բառարանների՝ արևմտահայերենի բառարաններում այս դերանունը խիստ թերի և անհետևողական է ներկայացված: Մեր դիտարկած բառարաններից ամենահնում՝ Պ. Զիզմեճյանի բառարանում, ես-ի համար նախ նշված է հյ. դեր. «1. եզակի առաջին դէմք խօսողը», ապա իբրև ինքնուրույն իմաստ գրված է. «2. անձնական դերանուն մասնաւոր հոլովում ունի» (ՀԱԼԼԲ, 230), և բերված են եզակի և հոգնակի բոլոր հոլովածները: ՀԼՆԲ, 1968-ում իբրև առաջին նշանակություն բերված է ինքս հոմանիշը, ապա երկրորդ նշանակությամբ արդեն բացատրված է քերականական իմաստը. «2. եզակի առաջին դէմք (խօսողը)» (ՀԼՆԲ, 1968, 131): Այս բառարանի՝ 1992 թ. վերամշակված հրատարակության մեջ այս իմաստների տեղերը փոխված են, սակայն երկուսում էլ ինքս դերանունը ո՛չ որպես ինքնուրույն գլխաբառ, ո՛չ որպես ինք դերանվան բառածև որևէ ձևով չի հիշատակվում: Այս հրատարակության մեջ, իբրև մի նոր բառիմաստ, ավելացված է ես դերանվան համանունը՝ մեր օժանդակ բայի ներկայի եզակի երկրորդ դեմքը (ՀԼՆԲ, 1992, 1, 549): Միայն ավելացնենք, որ այս բառարանը ընդհանրապես համանունները գրեթե չի տարբերակում և ներկայացնում է որպես բառիմաստներ:

ԴՈՒ: Արևելահայերենի բառարաններում այս դերանունը մենիմաստ է և ունի գրեթե նույն բացատրությունը. «Անձն. դեր. բ. դեմքի, այն բառը, որով դիմում է խօսողը լսողին, փոխանակ անունը տալու» (ՀԲԲ, 1, 536), «Անձնական դերանվան երկրորդ դեմք, եզակի թիվ, գործածվում է խոսակցին դիմե-

լիս» (ԺՀԼԲԲ, 1, 535), «Անձնական դերանվան երկրորդ դեմքի եզակին, որ ցույց է տալիս այն անձը, որին դիմում է խոսողն իբրև իր խոսակցի» (ԱՀԲԲ, 314): Արևմտահայերենի բառարաններում դու // դուն դերանունը, ինչպես և մյուս բոլոր անձնական դերանունները, փաստորեն բացատրված չէ: Պարզապես նշված են այս դերանվան քերականական հատկանիշները. «1. դերանուն, եզ., երկրորդ դեմք: 2. երեք խոսողներուն երկրորդ անձ» (ՀԱԼԼԲ, 191), «անձնական դերանուն, եզ. բ. դեմք» (ՀԼՆԲ, 1968, 121), «անձնական դերանուն, եզ. բ. դեմք» (ՀԼՆԲ, 1992, 1, 508):

Այնինչ վաղուց է նկատված, որ անձնական դերանունը և հատկապես նրա երկրորդ դեմքը կարող է ցույց տալ նաև ոչ անձ, առարկա<sup>4</sup>, ինչպես՝

Դու հպարտ չես, իմ հայրենիք,  
Տրտում ես դու և իմաստուն.  
Կիզում է քեզ մի հուր կնիք,  
Մի հըմայող ու հին խոստում<sup>5</sup>:

Դու, ինչպես նաև նա, ինքը երրորդ դեմքի դերանունները, գրականության մեջ հանդիպում են ևս մեկ իմաստով, որը մեր բառարաններից և ոչ մեկում արձանագրված չէ: Խոսքն այն մասին է, երբ հեղինակը մտովի դիմում է Աստծուն (այս դեպքում դերանունները գրվում են մեծատառով), ինչպես Հովհ. Թումանյանի քառյակում է.

Ամեն անգամ Քո տըվածից երբ մի բան ես Դու տանում,  
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքան է դեռ մնում,—  
Զարմանում եմ, թե՛ ո՛վ Շուայլ, ինչքան շատ ես տվել ինձ,  
Ինչքան շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից<sup>6</sup>:

Եթե խորհրդային ժամանակներում տպագրված հայաստանյան բառարաններում այս իմաստի բացակայությունը ընկալելի է<sup>7</sup>, ապա տարօրինակ է, որ այն չկա նաև արևմտահայերենի՝ Սիյուռքում հրատարակված բառարաններում:

ՆԱ: Քերականագիտության մեջ դերանունների ոչ միանշանակ ըմբռնումը պարզորոշ երևում է նա դերանվան լուսաբանման ժամանակ: Ս. Մալխասյանցն այս դերանունը համարում է միայն ցուցական և քննում է սա, դա, նա շարքում՝ սա գլխաբառի տակ: Նա այս դերանուններին նաև վերագրում է առաջին, երկրորդ և երրորդ դեմքեր: Էդ. Աղայանի բառարանում ևս առանձնացված չեն նա անձնական և ցուցական դերանունները, և ցուցականներին

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, Աբրահամյան. 1956, 96, 275–276, Մարգարյան. 2004, 291:

<sup>5</sup> Տերյան. 1985, 583:

<sup>6</sup> Թումանյան. 1969, 271:

<sup>7</sup> Օրինակ՝ «Արդի հայերենի բացատրական բառարանի» հեղինակն աշխատության առաջաբանում ստիպված է եղել նշել, որ բառարանում չի ընդգրկել «կրոնական և եկեղեցական բառերի մեծագույն մասը, որոնց իմացումը, հեղինակի կարծիքով, այսօրվա մասսայական ընթերցողին անհրաժեշտ չէ» (ԱՀԲԲ, XIII):

նույնպես վերագրված են դեմքեր. «ՆԱ<sup>1</sup>, դ. Անձնական և ցուցական դերանվան եզակի Վ դեմք: Ցույց է տալիս խոսքի առարկան, որ նախորդ հատվածում կամ շարունակության մեջ արտահայտված է եզ. թվով գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ խոսքի մասի պատկանող բառով»: (ԱՀԲԲ, 1043): Նշենք, որ այժմ ակնհայտ է, որ գոյականական ցուցական դերանուններն ունեն միայն երրորդ դեմք: Ակադեմիական բառարանը թեև առանձնացնում է նա-ի երկու՝ անձնական և ցուցական իմաստները, սակայն տալիս է դրանց միայն քերականական նշանակությունները. «ՆԱ, անձն. դ. Նրա, նրան, հոգն. նրանք: 1. Անձնական դերանվան եզ. թ. երրորդ դեմքը: Նա ձախ ձեռքով հովանի արավ աչքերին (Մ): 2. Երրորդ դեմքին առնչվող ցուցական դերանուն: Սա իմ գիրքն է, իսկ նա՝ քոնը» (ԺՀԼԲԲ, 4, 6):

Արևմտահայերենում, ինչպես հայտնի է, այս դերանունը գործածական չէ: Սիյուսքում հրատարակված բառարաններում միայն նշվում է, որ սա գործածվում է արևելահայոց մեջ և հոմանիշն է ան-ի: Իսկ ան-ի համար միայն քերականական բնութագրումը և երբեմն հղվածներն են տրված. «ԱՆ. 2. Անձնական դերանուն, Գ դեմք: Երկար ձևն է անիկա, բայց ան ձևն է որ կը հղովուի ...» (ՀԼՆԲ, 1992, 1, 66), «ԱՆ դեր. ցուցական 1. այն հղովելի. անոր անկէ անով զանի զայն զանիկա անոնք անոնց անոնցմէ անոնցմով զանոնք» (ՀԱԼԼԲ, 182):

Անձնական դերանունների հոգնակի թվի բառարանագրումն ունի նույն այն թերացումները, ինչ եզակին: Ս. Մալխասյանցը հոգնակիները սկզբունքորեն չի ներկայացնում առանձին գլխաբառով և քննում է եզակիների հետ միայն նշելով դրանց հղովածները: Ի միջի այլոց, բառարանում նա իբրև գլխաբառ տվել է միայն գրաբարյան մեք-ը: Մյուս բառարանների, այդ թվում՝ արևմտահայերենի, համար միայն նշենք մեկ-երկու թերացում և բացթողում: Միայն Ակադեմիական բառարանն է հիշատակում դուք դերանվան քաղաքավարական կիրառությունը, այն էլ՝ բավականին անորոշ ձևով և առանց նշելու դրա ուղղագրական յուրահատկությունը. «ԴՈՒՔ, (ձեր, ձեզ) Անձնական դերանվան հոգնակի թվի երկրորդ դեմքը: Կիրառվում է մի քանի կամ շատ մարդկանց դիմելիս, ինչպես նաև որպես մեկին դիմելու, քաղաքավարական ձև: Հիմա դուք գիտեք, հայ գյուղացիներ, որ ... կոմունիստների հետ միանալով դուք միանում եք բոլոր երկրների պրոլետարների հետ (ՎՏ): Ախր դուք չգիտեք, պարոն Շահյան, բանն ինչու՞ն է (Ն)» (ԺՀԼԲԲ, 1, 539): Մեր քննած բոլոր վեց բառարանները (բացառյալ ՀԲԲ-ն, որում այս բառը պարզապես չկա) մենք հոգնակիի համար բերվում է քերականական բնորոշումը. «ՄԵՆՔ, մեր, մեզ, մեզնից (մեզանից), մեզնով (մեզանով), դ. 1. Ա դեմքի անձնական դերանվան հոգն. թվի ուղղ. հոլ.»: Սա, ինչպես նշեցինք, թերի, ոչ բավարար բացատրություն է (մոտավորապես նույնն է, որ, ասենք, սեղան բառի համար գրեինք. «Իրանիչ գոյական, ուղղ. հոլ., եզ. թիվ, անորոշ առում»): Այս դերանվան համար բառարանները բերում են նաև երկրորդ՝ փոխանվանական նշանակությունը. «2. փխնն. Հանրություն, կոլեկտիվ (որին պատկանում է խոսողը): Զուգվում է եսը հզոր մենքի մեջ (Հ. Հակոբյան)» (ԱՀԲԲ, 997, ԺՀԼԲԲ, 3, 518), «2. (Փոխ.) հաւաքականութիւն (որուն կը պատկանի խօսողը՝ գրողը). օր. խմբագրական կազմի անդամ մը կրնայ գրնել. «Մենք այս հարցին անդրադարձանք ասկէ առաջ»» (ՀԼՆԲ, 1992, 2, 154): Սակայն այս դերանունն ունի

ևս մեկ նշանակություն, որը որևէ բառարանում արձանագրված չէ: Գիտական աշխատություններում, երբեմն էլ հրապարակախոսություն մեջ ես եզակիի իմաստով կարող է գործածվել մենք-ը: Սա այսպես կոչված «հեղինակային մենք»-ն է: Մենք-ը եզակի առաջին դեմքի նշանակությամբ է կիրառվում նաև միապետների (այդ թվում՝ հոգևոր) պաշտոնական խոսքում՝ հրամանագրերում, ուղերձներում, կոնդակներում և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ «բառարանում անհամապատասխանություններից խուսափելու համար բառարանագիրը պետք է աշխատի ոչ թե բառերի այբբենական ցուցակով, այլ խոսքի առանձին մասերի ներսում դրանց որոշակի բառապաշարային խմբավորումների հետ: Միայն այս ճանապարհով կարելի է հասնել իմաստների տարբերակման միօրինակության, բացատրությունների միատեսակության, դարձվածաբանական միավորների և օրինակների ներկայացման անհակասականության, ոճական բնութագրումների հետևողականության և միատեսակության»<sup>8</sup>: Անձնական դերանունների բառարանագրման գործում այս սկզբունքը իրականացնելը բավականին հեշտ է, քանի որ այս բառախումբը թվով շատ սահմանափակ է, կայուն և դարերի ընթացքում սկզբունքային փոփոխությունների չի ենթարկվել: Սա է հաստատում նաև էշ. Աղայանի փորձը, որի բառարանում անձնական դերանունները, նաև այլ քերականական և թեմատիկ խմբեր ամենահաջողն են ներկայացված հայ բառարանագրության մեջ:

### Եզրակացություն

#### Այսպիսով՝

ա) դերանունները չունեն ո՛չ իմաստային և ո՛չ էլ քերականական հատկանիշների ընդհանրություն ու միասնություն: Դրանց խոսքիմասային պատկանելության խնդիրն իր վերջնական լուծումը քերականագիտության մեջ դեռ չի ստացել, ինչը մեծապես ազդում է դերանունների բառարանային մատուցման ոչ միօրինակության վրա:

բ) Անձնական դերանունների՝ տարարմատ և տարահիմք կազմությամբ բառաձևերը (այդ թվում՝ հոգնակիի ձևերը) պետք է բառարաններում ներկայացվեն իբրև գլխաբառեր, ինքնուրույն բառահոլվածներով, այլապես լեզվին լավ չտիրապետողը կըժվարանա դրանք գտնել բառարանում: Սա առանձնապես կարևոր է արևմտահայերենի բառարանների համար, քանի որ դրանք մեծապես ունեն նաև ուսուցողական դեր:

գ) Անձնական դերանունների բառահոլվածում գլխաբառի մոտ, պարտադիր պետք է նշվեն հոլովման հարացույցի բոլոր ձևերը (ոչ միայն սեռականի և տրականի տարարմատ կազմությունները), քանի որ զուգաձևեր և անկանոնություններ կան բոլոր հոլովածներում:

դ) Բացատրության ժամանակ պետք է նշվեն դրանց ոչ միայն քերականական նշանակությունները, այլև պետք է ուշադրություն դարձվի դրանց խոսքային կիրառությանը և ուղղագրությանը (ասենք, քաղաքավարական

<sup>8</sup> Шведова. 1981, 171.

«Դուք»-ը, հեղինակային «մենք»-ը, Աստուծուն դիմելիա երկրորդ և երրորդ դեմքի դերանունների մեծատառով գրությունը):

ե) Անձնական դերանունների բառարանագրման գործում կարևոր է բառարանագիրների ոչ թե բառերի այբբենական ցուցակով, այլ խոսքի առանձին մասերի ներսում դրանց որոշակի բառապաշարային խմբավորումների հետ աշխատելը:

Մանուկ Ֆելեքյան – ք. գ. թ., ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի բառագիտություն, բառակազմություն, բառարանագիտություն, արևմտահայերեն: Հեղինակ է 1 ուսումնական ձեռնարկի, 20 հոդվածի և համահեղինակ՝ 1 բուհական դասագրքի: ORCID:0009-0008-3510-6426. manukfeleqyan@gmail.com

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արրահամյան Ս. 1956, Արդի հայերենի դերանունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 354 էջ:

Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1642 էջ:

Թումանյան Հովհ. 1969, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 271 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 614 էջ, 1972, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 719 էջ, 1974, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 576 էջ, 1980, հ. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 830 էջ:

Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան. 1954, հ. Ա., Յօրինեց Պետրոս Վարդ. Ճիզմեճեան, Հալեպ, տպարան Անի, 1460 էջ:

Հայոց լեզուի նոր բառարան. 1968, աշխատասիրեցին՝ Արտաշէս Տէր Խաչատուրեան Բ.Ա., Մ.Ա., Հրանդ Գանգրունի, Փարամազ Կ. Տօնիկեան, Պէյրուք, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատ., 931 էջ:

Հայոց լեզուի նոր բառարան. 1992, հ. առաջին, աշխատասիրեցին՝ Գնէլ Արքեպս. Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան, Պէյրուք, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատ., 1315 էջ:

Հայոց լեզուի նոր բառարան. 1992, հ. երկրորդ, աշխատասիրեց՝ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Պէյրուք, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատ., 1203 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 608 էջ, 1944, հ. 2, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 512 էջ, 1944, հ. 3, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 614 էջ, 1945, հ. 4, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 646 էջ:

Մարգարյան Ա. 2004, Հայոց լեզվի քերականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 625 էջ:

Տերյան Վ. 1985, Բանաստեղծություններ. լիակատար ժողովածու, Երևան, «Սովետական գրող» հրատ., 583 էջ:

Шведова Н. Ю. 1981, Однотомный толковый словарь (Специфика жанра и некоторые перспективы дальнейшей работы). – Русский язык. Проблемы художественной речи. Лексикология и лексикография. М., 874 с.

## СЛОВАРНОЕ ПРЕДСТАВЛЕНИЕ ЛИЧНЫХ МЕСТОИМЕНИЙ

МАНУК ФЕЛЕКЯН

## Резюме

*Ключевые слова: местоимения, толковый словарь, словари западноармянского языка, выбор заглавного слова в словаре, лексическое значение, грамматический признак, словарное толкование.*

Словарная интерпретация местоимений во многом зависит от грамматического понимания местоимения. Проблема частеречной принадлежности этой группы слов еще не получила своего окончательного решения в грамматике. Это одна из основных причин противоречий в лексикографировании личных местоимений.

Супплетивные словоформы личных местоимений (в том числе формы множественного числа) должны быть представлены в словарях в самостоятельных словарных статьях, как заглавные слова. В словарной статье личных местоимений, рядом с заглавным словом, обязательно должны быть указаны все формы парадигмы спряжения. При объяснении этих слов следует указывать не только их грамматические значения, но также следует обращать внимание на их речевое употребление и орфографию.

*Манук Фелекян – к. филол. н., доцент кафедры армянского языка ЕГУ, научный сотрудник отдела западноармянского литературного языка Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: лексикология, словообразование, лексикография армянского языка, западноармянский язык. Автор 1 учебного пособия, 20 статей и соавтор 1 вузовского учебника. ORCID:0009-0008-3510-6426. manukfeleqyan@gmail.com*

## LEXICOGRAPHICAL PRESENTATION OF PERSONAL PRONOUNS

MANUK FELEKYAN

## Summary

*Keywords: pronouns, explanatory dictionary, dictionaries of the Western Armenian language, choice of a headword in a dictionary, lexical meaning of a word, grammatical features, dictionary interpretation.*

The dictionary interpretation of pronouns largely depends on the grammatical understanding of the pronoun. The problem, to which part of speech this group of



words belong, has not received its final solution in grammar yet. This is one of the main reasons for controversies in the lexicography of personal pronouns.

Supplemental word forms of personal pronouns (including plural forms) must be presented in dictionaries as headwords with independent entries. In the dictionary entry for personal pronouns, next to the headword, all forms of the conjugation paradigm must be indicated. When explaining these words, it is necessary to indicate not only their grammatical meanings, but also their verbal usage and spelling.

*Manuk Felekyan – PhD in Philology, Associate Professor at the Department of the Armenian Language of YSU, Researcher at the Department of the Western Armenian Language of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: lexicology, word formation, lexicography of the Armenian language, Western Armenian literary language. Author of 1 textbook, 20 articles and co-author of 1 university textbook. ORCID:0009-0008-3510-6426. manukfeleqyan@gmail.com*